ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ---------- 2017թ. N----Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության նախագահի գրությունը, ղեկավարվելով ‹‹Գույքահարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ‹‹Հողի հարկի մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանում գտնվող շինությունների նկատմամբ սահմանել գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն՝ 5.360.930 /հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր երեսուն/ դրամ, որից գույքահարկ՝ 4.975.147 և հողի հարկ՝ 385.783 դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանում գտնվող շինությունների ընթացիկ 2017 թվականի գույքահարկի և հողի հարկի հաշվարկային գումարը կազմում է 5.360.930 /հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր երեսուն/ դրամ, որից գույքահարկ՝ 4.975.147 և հողի հարկ՝ 385.783 դրամ, որի համար «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության նախագահը 05.04.2017թ. հ. 37 գրությամբ դիմել է գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

«Հայաստան» մարզականը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որի կանոնադրական գործունեությունն ամբողջությամբ նպատակաուղղված է մանկապատանեկան սպորտի զարգացմանը: Այդ նպատակով պետբյուջեից մարզական միությանը հատկացվում է ֆինանսական աջակցություն՝ միայն մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների, սպասարկող անձնակազմի աշխատավարձի վճարման և դպրոցների բազային մարզակառույցների շահագործման կոմունալ ծախսերը հոգալու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ «Հայաստան» մարզականը պետբյուջեից ֆինանսավորվող, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, և գտնվում է ֆինանսապես ծանր վիճակում, առաջարկվում է «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը տրամադրել 5.360.930 /հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր երեսուն/ դրամի չափով արտոնություն՝ գույքահարկ-4.975.147, հողի հարկ-385.783:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ««ՀԱՅԱՍՏԱՆ» ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող, Կենտրոն վարչական շրջանում գտնվող շինությունների գույքահարկի և հողի հարկի գծով ընթացիկ 2017 թվականի հաշվարկային գումարը կազմում է է 5.360.930 /հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր երեսուն/ դրամ, որից գույքահարկ՝ 4.975.147 և հողի հարկ՝ 385.783 դրամ, որի համար «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության նախագահը 05.04.2017թ. հ37 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետին՝ գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ «Հայաստան» մարզականը պետբյուջեից ֆինանսավորվող, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, և գտնվում է ֆինանսապես ծանր վիճակում, նպատակահարմար եմ գտնում «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպությանը տրամադրել 5.360.930 /հինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար ինը հարյուր երեսուն/ դրամ, որից գույքահարկ՝ 4.975.147 և հողի հարկ՝ 385.783 դրամի չափով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 1

## «ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

**«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գույքահարկի և հողի հարկի գծով արտոնություն սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ